ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Վ. Գետաշեն Բ թաղ. 1 փողոց 46
էլ. փոստ veringetashen.gegharquniq@mta.gov.am

# ՔԱՂՎԱԾՔ

## Վ.ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20 ՀՈՒՆԻՍԻ 2019թ-ի № 4 ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նիստին մասնակցում են ավագանու 6 անդամներ:
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Տ. Մուրադյանը:
Արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Մ. Մխիթարյանը:

Օրակարգում՝

1.Վերին Գետաշեն համայնքի 2019թ-ի համայնքային բյուջեում կատարել փոփոխություն:
2. Համայնքի դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում:
3. Համայնքի «Էրեբունի» և «Չուխրշի Գուփ» կոչվող տարածքներում գտնվող հողամասերի չափագրում:
4. Աջակցություն «Գեղարքունիք» ՋՕԸ-ին :
5.Մարզպետի առընթեր երիտասարդական խորհրդի կազմում թեկնածուների առաջադրում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Մ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՔԱՂՎԱԾՔ
20.06.2019թ №4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ №16 ՈՐՈՇՈՒՄԻՑ

Քննարկելով համայնքում նախադպրոցական տարիքի երեխաների ծնողների դիմումների քանակությունը՝ մանկապարտեզում նոր խումբ բացելու անհրաժեշտության, համայնքի դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման և համայնքի «Էրեբունի» և «Չուխրիշի Գուփ» կոչվող տարածքներում գտնվող հողամասերի չափագրման աշխատանքների կատարման համար ֆինանսավորման վերաբերյալ հարցերը համայնքի ավագանին

Որոշեց

1. 2019թ-ի համայնքային բյուջեում կատարել փոփոխություն:
- Ջրամատակարարման ոլորտի բաժին 06, խումբ 03, դաս 01, ծրագիր 58, նախահաշվի 4657 կապիտալ դրամաշնորհներ հոդվածից պակասեցնել 9100000 (ինն միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:
-«Մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում նոր խումբ բացելու նպատակով՝ նախադպրոցական կրթություն նախահաշվի բաժին 09, խումբ 01, դաս 01, ծրագիր 51, 4639 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հոդվածին ավելացնել 7000000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ;
- Համայնքի դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով: Ճանապարհային տրանսպորտ նախահաշվի բաժին 04, խումբ 05, դաս 01, ծրագիր 51, 4251 շենքերի և շինությունների ընթացիք նորոգում հոդվածին ավելացնել 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:
-«Էրեբունի» և «Չուխրիշի Գուփ» կոչվող տարածքներում հողերի չափագրման աշխատանքների ֆինանսավորման նպատակով համայնքապետարանի ապարատի նախահաշվի՝ բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 51, 4241 մասնագիտական ծառայություններ հոդվածին ավելացնել 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Մ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՔԱՂՎԱԾՔ

Վ.ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.06.2019թ.-ի №4 ՆԻՍՏԻ ԹԻՎ 17 ՈՐՈՇՈՒՄԻՑ

ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Հաշվի առնելով բերքհավաքի (խոտհնձի) սեզոնի սկսման և դաշտամիջյան ճանապարհների անմխիթար վիճակի համայնքի ավագանին:

Որոշեց

1.Բարեկարգել համայնքի դաշտամիջյան ճանապարհները և այդ նպատակով համայնքային բյուջեից հատկացնել 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Մ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՔԱՂՎԱԾՔ

Վ.ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.06.2019թ.-ի №4 ՆԻՍՏԻ ԹԻՎ 18 ՈՐՈՇՈՒՄԻՑ

## ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԷՐԵԲՈՒՆԻ» ԵՎ «ՋՈՒԽՐՇԻ ԳՈՒՓ» ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՉԱՓԱԳՐՈՒՄ

Հաշվի առնելով համայնքի «Էրեբունի» և «Ջուխրիշի Գուփ» կոչվող տարածքներում գտնվող հողամասերի չափագրման անհրաժեշտությունը համայնքի ավագանին:

Որոշեց

1. Վերը նշված հողամասերի չափագրման աշխատանքները կատարելու համար համայնքի բյուջեից հատկացնել 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Մ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՔԱՂՎԱԾՔ

20.06.2019թ №4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ№ 19 ՈՐՈՇՈՒՄԻՑ

Քննարկելով համայնքում ոռոգման գործընթացի հետ կապված բնակչության դժգոհությունը՝ №2 (նոր) պոմպակայանի էլ.ենթակայանի տրանսֆորմատորի հզորությունը փոքր լինելու (400կվտ) պատճառով պոմպակայանը հնարավորություն չունի լիարժեք ոռոգման ջուր մղել: Ուստի համայնքում նորմալ ոռոգում կազմակերպելու համար վերը նշված էլ.ենթակայանի տրանսֆորմատորը ավելի հզորով (630 կվտ) փոխարինելու վերաբերյալ հարցը համայնքի ավագանին

Որոշեց

1. Մարզային ՋՕԸ-ի հաշվին որպես աջակցություն (համաֆինանսավորում) փոխանցել- 960000 (ինն հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ և խնդրել ՋՕԸ-ին վերոնշված 400 կվտ հզորությամբ տրանսֆորմատորը (630 կվտ) հզորությամբ տրանսֆորմատորով փոխարինելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ.ՄԽԻԹԱՐՅԱՆ